

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

« 10 » մարտի 2021 թ.

N 12 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ
ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ Պալատ) անդամակցելու կարգի 6.1.1.(3) կետը՝ Պալատի խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրման ընթացակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների Պալատ»
հասարակական կազմակերպության
խորհրդի
2021թ. մարտի 10-ի N 12 - Լ որոշման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԱՆԴԱՄԻ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ**

ք. Երևան 2021թ.

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրումը 3
3. Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ անդամի թեկնածուների գրացումը .. 3

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն ընթացակարգը մշակվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ Պալատ) անդամակցելու կարգի 6.1.1.(3) կետի համաձայն:
- 1.2 Սույնով սահմանվում է Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրման ընթացակարգը:
- 1.3 Պալատի խորհրդի անդամ և վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող են առաջադրվել Պալատի աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամները:
- 1.4 Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածու կարող են առաջադրել Պալատի աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամները:

2. Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրումը

- 2.1 Պալատի անդամի կողմից Պալատի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրության համար թեկնածուների առաջադրումը կատարվում է Պալատի գործադիր տնօրենի անունով՝ գրավոր ձևով՝ էլեկտրոնային փոստով, սուրհանդակային առաքմամբ կամ անձնական առաքմամբ:
- 2.2 Թեկնածուների առաջադրումը կատարվում է հերթական ժողովի դեպքում՝ ոչ ուշ, քան այն անցկացնելու ամսաթվից 7 (յոթ) օր առաջ, իսկ արտահերթ ժողովի դեպքում՝ ոչ ուշ, քան այն անցկացնելու ամսաթվից 3 (երեք) օր առաջ: Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի ընտրության համար թեկնածուների առաջադրման թերթիկի ձևը կցվում է (Ընթացակարգի հավելված),
- 2.3 Պալատի յուրաքանչյուր անդամ կարող է առաջադրել խորհրդի անդամի մինչև երկու թեկնածու, իսկ վերստուգիչ հանձնաժողովի անդամի՝ մեկ թեկնածու,
- 2.4 Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի ընտրության համար առաջադրված թեկնածուների վերաբերյալ ներկայացվում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝ անուն, ազգանուն, հայրանուն, հիմնական աշխատանքի վայր, պալատի ռեեստրում հիմնական գրառման գրանցման համար (<ԳԳԿ):

3. Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ անդամի թեկնածուների գրացումը

3.1 Պալատի խորհրդի անդամի թեկնածու է գրանցվում Պալատի այն անդամը, ում առաջադրել են Պալատի առնվազն 15 անդամ: Ընդ որում, գրանցված թեկնածուներից առնվազն 8 թեկնածուն պետք է լինեն աուդիտորներ:

3.2 Այն դեպքում, երբ 3.1 կետի պահանջների բավարարող գրանցված թեկնածուների քանակը փոքր է 15-ից և (կամ) աուդիտորների քանակը փոքր 8-ից, որպես թեկնածու գրանցվում են ձայների առավել քանակով առաջադրված թեկնածուները: Գրանցված թեկնածուների քանակը չպետք է գերազանցի 20-ը: Ընդ որում, գրանցված թեկնածուներից առնվազն 8-ը պետք է լինեն աուդիտորներ: Թեկնածուների առաջադրման քանակների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է առավել տարիքով թեկնածուին:

3.3 Պալատի վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածու է գրանցվում Պալատի այն անդամը, ում առաջադրել են Պալատի առնվազն 5 անդամ:

3.4 Այն դեպքում, երբ 3.3 կետի պահանջների բավարարող գրանցված թեկնածուների քանակը փոքր է 5-ից և (կամ) աուդիտորների քանակը փոքր 3-ից, որպես թեկնածու գրանցվում են ձայների առավել քանակով առաջադրված թեկնածուները: Գրանցված թեկնածուների քանակը չպետք է գերազանցի 8-ը: Ընդ որում, գրանցված թեկնածուներից առնվազն 3-ը պետք է լինեն աուդիտորներ: Թեկնածուների առաջադրման քանակների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է առավել տարիքով թեկնածուին:

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ.մարտի 10-ի N 12 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենին

Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի ընտրության համար թեկնածուների առաջադրման

ԹԵՐԹԻԿ

Ես՝ _____, ՀԳԳՀ _____,
(ազգանուն, անուն, հայրանուն)

Պալատի խորհրդի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածու առաջադրում եմ.

1. Պալատի խորհրդի անդամի թեկնածու՝

Ազգանուն, անուն, հայրանուն	ՀԳԳՀ	Հիմնական աշխատանքի վայրը	Այլ տեղեկություններ

2. Պալատի վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկնածու՝

Ազգանուն, անուն, հայրանուն	ՀԳԳՀ	Հիմնական աշխատանքի վայրը	Այլ տեղեկություններ

« »

20 թ.

ամսաթիվ

ստորագրությունը